

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՎԵՐՋԻՆ ԿՈՆԴԱԿԸ

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՇԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀԱՅԱԶԳԻ ԳԱՂԹԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴՈՅ ՄԵՐՈՅ, ՈՐՔ Ի ՍՓԻՒՌՍԴ ԷՔ Ի ԶԱՆԱԶԱՆ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ, ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴՒՈՅ ՄԵՐՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ, ՆՈՅԵՄԲՔ ՓՐԿԶԱՒԱՆԴ ՍԷՐ, ՈՂՋՈՅՆ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Յաւուրս խորին ծերութեան մերոյ թախծալից սրտիւ լսեմք երբեմն, զի այլևայլ կուսակցութիւնք համազգի եղբարց ազգայնոց մերոց յայլ և այլ տեղիս կենցաղավարին ընդ միմեանս հակառակ սիրոյ, աւերմուտ խաղաղութեան և փրկարար պատուիրանի Փրկչին մերոյ, և զի՞նչ շահին այսպիսի եղբայրատեաց սրտիւ և գործովք, եթէ ոչ կորուստ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, որով ոչ միայն վնասին առժամապէս, այլ աւա՜ղ, միանգամ ընդ միշտ վարկաբեկ լինին առաջի ազգաց քաղաքակրթելոց, և գտանին ի վտանգս ազգի ազգի սպառնալեաց ապագային: Եւ նրմարտիւ ասեմք, զի այսպիսի դասակարգի մերազնէից եթէ ոչ կենցաղավարիցին եղբայրական համերաշխութեամբ և սիրով, տուժել տուժեսցին զգոյութիւն իւրեանց: Եւ ո՞չ ապաքէն մինչև իսկ ի քաղաքակրթեալ ազինս և ի մեծազօր պետութիւնս գտանին կուսակցութիւնք, և չիցէ՞ բաւական լինելն նոցա Ձեզ օրինակ, զի բազմաթիւ կուսակցութիւնք նոցա կեան ընդ միմեանս ա՛յնպիսի անկեղծ սիրով և ազնուութեամբ, որպէս թէ լինէին մի սիրտ և մի գաղափար:

Ո՜հ, որդեա՜կք իմ սիրեցեալք, սթափեցարուք ի թմրութեանց Ձերոց և ի խոր քնոյ անգիտութեան և անհեռատեսութեան, և տեսէք, երէ յո՛ղպիսում փափուկ ժամանակի գտանիմք: Մեծ իմաստութիւն ամէն դարուց և ժամանակաց ա՛յն է, զի ժողովուրդք և համայնք և վարչութիւնք նոցին խելամուտ լինին համերաշխ սիրով և ազնիւ վարուք կեալ միշտ ընդ միմեանս յօգուտ և ի զարգացումն իւրեանց, և վասն նշմարտութեանս պատմութիւնք ազգաց վկայ են մեզ ամենեցուն: Եւ նախագէտն ամենայնի Տէրն մեր Քրիստոս գիտէր, երէ լինելոց էին ատելութիւնք յազգս, վասն այնորիկ զգուշացուցեալ՝ յառաջագոյն ասաց. «Պատուիրան նոր տամ Ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս». արդարև պատուիրանն այն է միշտ նոր և յատենական, և այնու փրկարար պատուիրանա՛ւ ևեր պահպանեն միշտ ազգ և ազինք զգոյութիւն իւրեանց:

Այդ՝ այսու հայրապետական կոնդակաւ մերով՝ վշտալից Հայրապետս տարաբախտ Ազգիս, որ հասեալ եմ ի մուտս արևու կենաց իմոց, յորդոր կարդամ առ սիրելիսդ մեր ամենեսեան, զի իսպառ բօրափեսջիք զատելութիւն և զմեծամտութիւն ի սրտից Ձերոց, և եղիջիք ընդմիշտ մի սիրտ և մի հոգի՝ համերաշխ և եղբայրական սուրբ սիրով, և գործեցէք ա՛յնպիսի խոնարհական իմաստութեամբ, զի արգասիք գործունէութեանց Ձերոց ըստ ամենայնի ո՛չ լինիցին երբեք ի վնաս բշուառ Ազգին մերոյ, այլ յօգուտ և զարգացումն նորին:

Օրհնելով զՁեզ զամենեսիսդ, հայցեմք ի Պարգևատուէն ամենեցուն, զի հեղցէ ի Ձեզ զգթութիւն Իւր, և շնորհեսցէ Ձեզ սիրտ նոր և նշմարիտ, կեալ միշտ ընդ միմեանս սիրով և միաբանութեամբ, և ազատեսցէ զՁեզ յամենայն տառապանաց և պարգևեսցէ կեանս երջանկաւէտս յամայր ամօք:

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ

Ի 20 սեպտեմբերի 1907 ամի
և ըստ տոմարիս ՌՑՄԷ